

Հաստատված է

ԹԲԿ-ՇՀ ԱՊՁԲ-16/1 ծածկագրով

2 րջ անակային համաձայնագրերի միջոցով գնում կատարելու
ընթացակարգի հանձնաժողովի

2016թ. <<հունվար>> <<11>>-ի թիվ <<1>> ընդունված

<<Թալիսի ԲԿ>> ՓԲԸ

ՀՐԱՎԵՐ

<<Թալիսի ԲԿ>> ՓԲԸ-ի ԿԱՐԻՔՆԵՐԻ ՀԱՄԱՐ` <<ՎԱՌԵԼԻՔԻ>> ՁԵՌՔԵՐՄԱՆ
ՆՊԱՏԱԿՈՎ ՀԱՅՏԱՐԱՐՎԱԾ ՇՐՋԱՆԱԿԱՅԻՆ ՀԱՄԱՁԱՅՆԱԳՐԵՐԻ ՄԻՋՈՑՈՎ
ԳՆՈՒՄ ԿԱՏԱՐԵԼՈՒ ԸՆԹԱՑԱԿԱՐԳԻ

Հարգելի մասնակից

Նախքան հայտ կազմելը և ներկայացնելը խնդրում ենք մանրամասնորեն ուսումնասիրել սույն հրավերը, քանի որ հրավերին չհամապատասխանող հայտերը ենթակա են մերժման:

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

<<Թալիսի ԲԿ>> ՓԲԸ-ի ԿԱՐԻՔՆԵՐԻ ՀԱՄԱՐ` <<ՎԱՌԵԼԻՔԻ >>

ՁԵՌՔԲԵՐՄԱՆ ՆՊԱՏ ԱԿՈՎ ՀԱՅՏ ԱՐԱՐՎԱԾ ՍՈՒՅՆ ՇՐՋԱՆԱԿԱՅԻՆ
ՀԱՄԱՁԱՅՆԱԳՐԵՐԻ ՄԻՋՈՑՈՎ ԳՆՈՒՄ ԿԱՏ ԱՐԵԼՈՒ ԸՆԹԱՑ ԱԿԱՐԳԻ ՀՐԱՎԵՐԻ

ՄԱՍ I.

1. Գնման առարկայի բնութագիրը
2. Մասնակցի մասնակցություն իրավունքի պահանջները, որակավորման չափանիշները և դրանց գնահատման կարգը
3. Հրավերի պարգաբանումը և հրավերում փոփոխություն կատարելու կարգը
4. Հայտը ներկայացնելու կարգը
5. Հայտի գործողություն ժամկետը, հայտերում փոփոխություն կատարելու և դրանք հետվերցնելու կարգը
7. Հայտերի բացումը
8. Հայտերի գնահատումը, համեմատումը և արդյունքների ամփոփումը
9. Պայմանագրի կնքումը
10. Պայմանագրի ապահովումը
11. Ընթացակարգը չկայացած հայտարարելը
12. Գնման գործընթացի հետ կապված գործողությունները և (կամ) ընդունված որոշումները բողոքարկելու մասնակցի իրավունքը և կարգը

ՄԱՍ II. ՇՐՋԱՆԱԿԱՅԻՆ ՀԱՄԱՁԱՅՆԱԳՐԵՐԻ ՄԻՋՈՑՈՎ ԳՆՈՒՄ ԿԱՏ ԱՐԵԼՈՒ ԸՆԹԱՑ ԱԿԱՐԳԻ ՀԱՅՏԸ ՊԱՏՐԱՍԵԼՈՒ ՀՐԱՀԱՆԳ

1. Ընդհանուր դրույթներ
2. Ընթացակարգի հայտը
3. Առաջին տեղը զբաղեցրած մասնակցի կողմից ներկայացվող փաստաթղթերը
4. Հայտի գնային առաջարկը
5. Հայտը պատրաստելու կարգը
6. Հավելվածներ 1-11

<<Թալիսի ԲԿ>> ՓԲԸ-ն (այսուհետև` Պատվիրատու)` <<վառելիքի >> ձեռքբերման նպատակով կազմակերպել է <<ԹԿ-ՇՀ ԱՊՁԲ-16/1>> ծածկագրով շրջանակային համաձայնագրերի միջոցով գնում կատարելու ընթացակարգը (այսուհետև` ընթացակարգ) և տրամադրում է սույն հրավերը:

Սույն հրավերը կազմվել է գնումների մասին ՀՀ օրենսդրության, այդ թվում՝ <<Գնումների մասին>> ՀՀ օրենքի (այսուհետև՝ Օրենք), ՀՀ կառավարության 10.02.2011թ. N 168-Ն որոշմամբ հաստատված <<Գնումների գործընթացի կազմակերպման>> կարգի (այսուհետև՝ Կարգ) և այլ հրավերներն ակտերի պահանջներին համապատասխան և նպատակ ունի Պատվիրատուի կողմից հայտարարված ընթացակարգին մասնակցելու մտադրություն ունեցող անձանց (այսուհետև՝ Մասնակից) տեղեկացնելու ընթացակարգի պայմաններին՝ գնման առարկայի, ընթացակարգի անցկացման, հաղթողին որոշելու և նրա հետ պայմանագրի կնքելու մասին, ինչպես նաև օժանդակելու ընթացակարգի հայտը պատրաստելիս:

Հայտեր կարող են ներկայացնել <<Գնումների աջակցման կենտրոն>> ՊՈԱԿ-ի հետ շրջանակային համաձայնագրեր կնքած հնարավոր մասնակիցները:

Սույն ընթացակարգի հայտերն անհրաժեշտ է ներկայացնել ՀՀ Արագածոտնի մարզ.թ.Թալինի Մ.Քոթանյան 10, սենյակ 1 հասցեով

փաստաթղթային ձևով մինչև սույն հրավերը հրապարակվելու օրվան հաջորդող <<7>>-րդ աշխատանքային օրվա ժամը <<12:00>>-ը և դրանք պետք է կազմված լինեն հայերեն:

Արգելվում է միևնույն անձի (անձանց) կողմից հիմնադրված կամ ավելի քան հիսուն տոկոս միևնույն անձի (անձանց) պատկանող բաժնեմաս ունեցող կազմակերպությունների միաժամանակյա մասնակցությունը գնման միևնույն գործընթացին, բացառությամբ պետության կամ համայնքների կողմից հիմնադրված կազմակերպությունների և (կամ) համատեղ գործունեության կարգով (կոնսորցիումով) գնումների գործընթացին մասնակցության դեպքերի:

Սույն ընթացակարգի հրավերը ստանալու համար անհրաժեշտ է դիմել Պատվիրատուին սույն հրավերի հրապարակման օրվանից մինչև՝ <<21.01.2016>> ժամը <<12:00>>-ը: Ընդ որում, փաստաթղթային ձևով հրավեր ստանալու համար Պատվիրատուին պետք է ներկայացնել գրավոր դիմում: Պատվիրատուն ապահովում է փաստաթղթային ձևով հրավերի տրամադրումն անվճար:

Էլեկտրոնային ձևով հրավեր տրամադրելու պահանջի դեպքում Պատվիրատուն ապահովում է հրավերի՝ էլեկտրոնային ձևով տրամադրումը դիմումն ստանալու օրվան հաջորդող աշխատանքային օրվա ընթացքում:

Սույն հրավերով նախատեսված կարգով հրավեր չստանալը չի սահմանափակում մասնակցի՝ սույն ընթացակարգին մասնակցելու հրավերներ:

Սույն ընթացակարգի հետ կապված հարաբերությունների նկատմամբ կիրառվում է Հայաստանի Հանրապետության իրավունքը: Սույն ընթացակարգի հետ կապված վեճերը ենթակա են քննության Հայաստանի Հանրապետության դատարաններում:

<<Թալինի ԲԿ>>ՓԲԸ էլեկտրոնային փոստի հասցեն է՝ <<talini-bk@list.ru>>,

հեռախոսահամարն է՝ <<093 19 14 14>>:

1. ԳՆՄԱՆ ԱՌԱՐԿԱՅԻ ԲՆՈՒԹԱԳԻՐԸ

Գնման առարկա է հանդիսանում <<Թալինի ԲԿ>>ՓԲԸ-ի կարիքների համար՝ <<Վառելիքի>> ձեռքբերումը, որը խմբավորված է <<1>> չափաբաժնով՝

Չափաբաժնի համարը	Չափաբաժնի անվանումը
1	Բենզին ռեզուլյար

<<Վառելիքի>> տեխնիկական բնութագրերը, ինչպես նաև գնման առարկայի մասնագիտը, տեխնիկական տվյալները և այլ ոչ գնային պայմանների ամբողջական և համարժեք նկարագրությունը կազմում են պայմանագրի անբաժանելի մասը, որի նախագիծը ներկայացված է սույն հրավերի N 6 հավելվածում:

2. ՄԱՍՆԱԿՑԻ ՄԱՍՆԱԿՑՈՒԹՅԱՆ ԻՐԱՎՈՒՆՔԻ ՊԱՀԱՆՋՆԵՐԸ, ՈՐԱԿԱՎՈՐՄԱՆ ՉԱՓԱՆԻՇՆԵՐԸ ԵՎ ԴՐԱՆՑ ԳՆԱՀԱՏՄԱՆ ԿԱՐԳԸ

2.1 Մասնակցների՝ Օրենքի 5-րդ հոդվածի 1-ին մասով նախատեսված՝ <<Մասնակցություն իրավունքը>> չափանիշը գնահատվում է հետևյալ կարգով՝

1) եթե Մասնակցը հայտով ներկայացրել է Օրենքի 5-րդ հոդվածի 1-ին մասով նախատեսված պահանջներին իր տվյալների համապատասխանություն մասին գրավոր հայտարարություն, ապա տվյալ Մասնակցին իրավունք է ստանում մասնակցելու գնման ընթացակարգին,

2) բացի հայտարարությունից, Օրենքի 5-րդ հոդվածի 1-ին մասով նախատեսված պահանջների հիմնավորման նպատակով Մասնակցից, այդ թվում՝ ընտրված մասնակցից այլ փաստաթղթեր չեն կարող պահանջվել:

2.2 Սույն ընթացակարգին մասնակցելու իրավունք չունեն անձինք.

1) որոնք հայտը ներկայացնելու օրվա դրությամբ դատական կարգով ճանաչվել են սնանկ,

2) որոնք հայտը ներկայացնելու օրվա դրությամբ ունեն ժամկետանց պարտքեր Հայաստանի Հանրապետության հարկային և պարտադիր սոցիալական ապահովության վճարների գծով,

3) որոնց գործադիր մարմնի ներկայացուցիչը հայտը ներկայացնելու օրվան նախորդող երեք տարիների ընթացքում դատապարտված է եղել տնտեսական գործունեության կամ պետական ծառայության դեմ ուղղված հանցագործության համար, բացառությամբ այն դեպքերի, երբ դատվածությունը օրենքով սահմանված կարգով հանված կամ մարված է,

4) որոնք հայտը ներկայացնելու օրվա դրությամբ ներառված են գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակցների ցուցակում:

Եթե Մասնակցը հայտով ներկայացրել է սույն հրավերի II մասի 2.2.1 կետով նախատեսված գրավոր հայտարարություն, ապա տվյալ Մասնակցին իրավունք է ստանում մասնակցելու գնման ընթացակարգին:

2.3 Մասնակիցը պետք է ունենա կնքվելիք պայմանագրով նախատեսված պարտավորությունների կատարման համար հրավերով պահանջվող՝

- 1) մասնագիտական փորձառություն ,
- 2) տեխնիկական միջոցներ ,
- 3) ֆինանսական միջոցներ ,
- 4) աշխատանքային ռեսուրսներ :

Ընդ որում մասնակցի՝

- <<Մասնագիտական փորձառություն>> չափանիշը գնահատվում է հետևյալ կարգով՝

1) Մասնակիցը հայտով ներկայացնում է հայտարարություն (Հավելված 3.1), որ հայտը ներկայացնելու տարվա նոյեմբերին տարվա ընթացքում պատշաճ ձևով իրականացրել է համանման (նմանատիպ) առնվազն մեկ պայմանագիր: Նախկինում կատարված պայմանագիրը (կամ պայմանագրերը) գնահատվում է (կամ գնահատվում է ն) նմանատիպ, եթե դրա (դրանց) շրջանակներում մատակարարված ապրանքների ծավալը (կամ հանրագումարային ծավալը)՝ գումարային արտահայտությամբ, պակաս չէ տվյալ գնման ընթացակարգի շրջանակներում մասնակցի ներկայացրած գնային առաջարկի հիսուն տոկոսից, որից առնվազն մեկ պայմանագրի շրջանակներում մատակարարված ապրանքների ծավալը գումարային արտահայտությամբ, պակաս չէ տվյալ գնման ընթացակարգի շրջանակներում մասնակցի ներկայացրած գնային առաջարկի քսան տոկոսից: Նմանատիպ են համարվում վառելիքի մատակարարումը¹:

2) առաջին տեղը զբաղեցրած մասնակիցը որպես սույն պարբերության 1-ին ենթակետով սահմանված որակավորման չափանիշի հիմնավորող փաստաթուղթ ներկայացնում է նախկինում կատարած պայմանագրի պատճենը, իսկ դրա պատշաճ կատարումը գնահատելու համար՝ տվյալ պայմանագրի կողմերի հաստատած՝ պայմանագրի սահմանված ժամկետում կատարումը հավաստող ակտի (հանձնման ընդունման արձանագրությունն այլն) պատճենը կամ տվյալ պայմանագրի կատարումն ընդունած կողմի գրավոր հավաստումը²:

3) Մասնակցի որակավորումը այս չափանիշի գծով գնահատվում է բավարար, եթե վերջինս ապահովում է սույն պարբերությամբ նախատեսված պահանջները:

- <<Ֆինանսական միջոցներ>> չափանիշը գնահատվում է հետևյալ կարգով՝

1) Հայաստանի Հանրապետության ռեզիդենտ հանդիսացող Մասնակիցը հայտով ներկայացնում է հայտարարություն (Հավելված 3.4) այն մասին, որ հայտը ներկայացվելու նախորդող՝

ա. երեք հաշվետու տարիների համախառն եկամտի հանրագումարը պակաս չէ ներկայացված գնային առաջարկից .

¹ Եթե գնման առարկայի նմանատիպ իմացության հիմնական աղբյուրները գնումներին պահանջվող առարկայի համաձայն չեն գերազանցում գնումների քանակի միավորների հնգապատիկը, ինչպես նաև, եթե գնման առարկա է հանդիսանում անշարժ գույքը, ապա սույն կետը հրավերից հանվում է:

² Եթե գնման առարկայի նմանատիպ իմացության հիմնական աղբյուրները գնումներին պահանջվող առարկայի համաձայն չեն գերազանցում գնումների քանակի միավորների հնգապատիկը, ինչպես նաև, եթե գնման առարկա է հանդիսանում անշարժ գույքը, ապա սույն կետը հրավերից հանվում է:

բ. հաշվեկշռու տարվա ընթացքում պարտավորություններ հաշվեկշռային արժեքը չի գերազանցել ակտիվների հաշվեկշռային արժեքը:

2) եթե Մասնակիցը չի հանդիսանում Հայաստանի Հանրապետության ռեզիդենտ կամ Մասնակիցը ֆիզիկական անձ է, ապա հայտով ներկայացնում է հայտարարություն (Հավելված 3.5) պայմանագրի կատարման համար անհրաժեշտ ֆինանսական միջոցների առկայություն մասին³:

3) Մասնակիցը հայտով ներկայացնում է հայտարարություն (Հավելված 3.5) պայմանագրի կատարման համար անհրաժեշտ ֆինանսական միջոցների առկայություն մասին⁴:

4) Մասնակցի նրավաձևումը այս չափանիշի գծով գնահատվում է բավարար, եթե վերջինս ապահովում է սույն պարբերությամբ նախատեսված պահանջները:

Որակավորման չափանիշներից որևէ մեկին չբավարարելու դեպքում Մասնակցի հայտը մերժվում է:

3. ՀՐԱՎԵՐԻ ՊԱՐԶԱԲԱՆՈՒՄԸ ԵՎ ՀՐԱՎԵՐՈՒՄ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆ ԿԱՏԱՐԵԼՈՒ ԿԱՐԳԸ

3.1 Օրենքի 26-րդ հոդվածի համաձայն՝ Մասնակիցն իրավունք ունի Պատվիրատուից պահանջել հրավերի պարզաբանում:

Մասնակիցն իրավունք ունի հայտերի ներկայացման վերջնաժամկետը լրանալուց առնվազն հինգ օրացուցային օր առաջ պահանջելու հրավերի պարզաբանում: Հարցումը կատարած Մասնակցին պարզաբանումը տրամադրվում է հարցումն ստանալու օրվան հաջորդող երեք օրացուցային օրվա ընթացքում:

3.2 Հարցմանն պարզաբանումների բովանդակության մասին հայտարարությունը հրապարակվում է տեղեկագրում՝ հարցումը կատարած Մասնակցին պարզաբանումը տրամադրելու օրվան հաջորդող օրը, առանց նշելու հարցումը կատարած Մասնակցի տվյալները:

3.3 Պարզաբանում չի տրամադրվում, եթե հարցումը կատարվել է սույն բաժնով սահմանված ժամկետի խախտմամբ, ինչպես նաև, եթե հարցումը դուրս է հրավերի բովանդակության շրջանակից:

3.4 Հայտերի ներկայացման վերջնաժամկետը լրանալուց առնվազն հինգ օրացուցային օր առաջ հրավերում կարող են կատարվել փոփոխություններ: Փոփոխություն կատարելու օրվան հաջորդող երեք օրացուցային օրվա ընթացքում փոփոխություն կատարելու և դրանք տրամադրելու պայմանների մասին հայտարարություն է հրապարակվում տեղեկագրում:

3.5 Հրավերում փոփոխություններ կատարվելու դեպքում հայտերը ներկայացնելու վերջնաժամկետը հաշվվում է այդ փոփոխությունների մասին տեղեկագրում հայտարարության օրվանից:

4. ՀԱՅՏԸ ՆԵՐԿԱՅԱՑՆԵԼՈՒ ԿԱՐԳԸ

³ Եթե գնման առարկայի նմանատիպ խմբի նախահաշվային գինը գնումների պլանի լրացման կարգի համաձայն չի գերազանցում գնումների բազային միավորի հնգապատիկը, ինչպես նաև, եթե գնման առարկա է հանդիսանում անշարժ գույքը, ապա սույն պարբերության 1-ին և 2-րդ կետերը հրավերից հանվում են:

⁴ Եթե գնման առարկայի նմանատիպ խմբի նախահաշվային գինը գնումների պլանի լրացման կարգի համաձայն գերազանցում է գնումների բազային միավորի հնգապատիկը, ինչպես նաև, եթե գնման առարկա չի հանդիսանում անշարժ գույքը, ապա սույն կետը հրավերից հանվում է:

4.1 Սույն ընթացակարգին մասնակցելու համար Մասնակիցը Պատվիրատուին է ներկայացնում ընթացակարգի հայտ:

Մասնակցները կարող են ընթացակարգի հայտ ներկայացնել ինչպես յուրաքանչյուր չափաբաժնի, այնպես էլ միաժամանակ մի քանի կամ բոլոր չափաբաժնիներին համար: Ընթացակարգի հայտը սույն հրավերի հիման վրա մասնակցի կողմից ներկայացվող առաջարկն է:

Ընթացակարգի հայտերը ներկայացվում են մինչև դրա համար սույն հրավերով սահմանված ժամկետի ավարտը:

Ընթացակարգի հայտերի պատրաստման կարգը նկարագրված է սույն հրավերի II մասում՝ Շրջանակային համաձայնագրերի միջոցով գնում կատարելու ընթացակարգի հայտերը պատրաստելու հրահանգում:

4.2 Ընթացակարգի հայտերն անհրաժեշտ է ներկայացնել Պատվիրատուին ոչ ուշ, քան սույն ընթացակարգի հրավերը տեղեկագրում հրապարակվելու օրվան հաջորդող <<7>>րդ աշխատանքային օրվա ժամը <<12:00>>-ն, <<ՀՀ Արագածոտնի մարզ, Թալին Մ.Քոթանյան 10, սենյակ 1>> հասցեով: Ընթացակարգի հայտերը ստանում և հայտերի գրանցամատյանում գրանցում է հանձնաժողովի քարտուղար <<Արմեն Ռ. Խաչատրյանը>>: Հայտերը քարտուղարի կողմից գրանցվում են գրանցամատյանում՝ ըստ ստացման հերթականության՝ գրանցամատյանում նշելով գրանցման համարը, օրը և ժամը: Մասնակցի պահանջով Պատվիրատուն տրամադրում է հայտի ընդունման մասին տեղեկանք: Հայտերը ներկայացնելու վերջնաժամկետը լրանալուց հետո ներկայացված հայտերը գրանցամատյանում չեն գրանցվում և դրանք՝ ստանալու օրվան հաջորդող երեք աշխատանքային օրվա ընթացքում քարտուղարի կողմից վերադարձվում են:

4.3 Մասնակիցը հայտով ներկայացնում է՝

ա. գնման ընթացակարգին մասնակցելու գրավոր դիմում՝ նշելով հարկ վճարողի հաշվառման համարը,

բ. իր կողմից հաստատված հայտարարությունն՝ Օրենքով նախատեսված մասնակցության իրավունքի և հրավերով սահմանված որակավորման չափանիշներին իր համապատասխանության մասին,

գ. գնային առաջարկ,

դ. իր կողմից հաստատված հայտարարությունն՝ առաջարկվող ապրանքի՝ հրավերով նախատեսված տեխնիկական բնութագրերին համապատասխանության վերաբերյալ, պայմանով, որ 1-ին տեղը զբաղեցրած մասնակից ճանաչվելու դեպքում ներկայացնում է նաև առաջարկվող ապրանքի անվանումը և տեխնիկական բնութագրերը,

ե. իր կողմից հաստատված հայտարարությունն՝ Եվրասիական տնտեսական միության անդամ երկրների արտադրության ապրանք մատակարարելու վերաբերյալ⁵:

ը. գործակալության պայմանագրի պատճենը և դրա կողմ հանդիսացող անձի տվյալները, եթե պայմանագիրը իրականացվելու է գործակալության միջոցով.

թ. համատեղ գործունեության պայմանագիրը, եթե Մասնակիցը գնման ընթացակարգին մասնակցում է համատեղ գործունեության կարգով (կոնսորցիումով):

⁵ Մասնակիցը սույն կետով նախատեսված հայտարարությունը հայտով ներկայացնում է, եթե առաջարկում է մատակարարել Եվրասիական տնտեսական միության անդամ երկրների արտադրության ապրանք:

5. ՀԱՅՏԻ ԳՈՐԾՈՂՈՒԹՅԱՆ ԺԱՄԿԵՏԸ, ՀԱՅՏԵՐՈՒՄ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆ

ԿԱՏԱՐԵԼՈՒ

ԵՎ ԴՐԱՆՔ ՀԵՏ ՎԵՐՑՆԵԼՈՒ ԿԱՐԳԸ

5.1 Օրենքի 28-րդ հոդվածի համաձայն՝ հայտը վավեր է մինչև Օրենքին համապատասխան պայմանագրի կնքումը, Մասնակցի կողմից հայտի հետ վերցնելը, հայտի մերժումը կամ ընթացակարգը չկայացած հայտարարվելը:

5.2 Օրենքի 28-րդ հոդվածի համաձայն՝ Մասնակցը, մինչև սույն հրավերի 4.2 կետում նշված՝ հայտերի ներկայացման վերջնաժամկետը, կարող է փոփոխել կամ հետ վերցնել իր հայտը:

5.3 Հայտի փոփոխման մասին ծանուցումն ուղարկվում է սույն հրավերի II մասի՝ <<Շրջանակային համաձայնագրերի միջոցով գնում կատարելու ընթացակարգի հայտը պատրաստելու>> կարգի 5.1 կետի պահանջներին համապատասխան կազմված ծրարով՝ դրավրապետի անունով <<փոփոխում>> բառը: Հայտը հետ վերցնելու դեպքում Մասնակցը, մինչև հայտերի բացելը, ներկայացնում է այդ մասին գրավոր ծանուցում:

7. ՀԱՅՏԵՐԻ ԲԱՑՈՒՄԸ

7.1 Հայտերի բացումը կկատարվի գնահատող հանձնաժողովի (այսուհետև՝ հանձնաժողով) բացման նիստում՝ ծանուցվելու օրվան հաջորդող <<7>>-րդ աշխատանքային օրվա ժամը <<12:00>>-ին, <<ՀՀ Արագածոտնի մարզ, Ք.Թալին Մ.Քոթանյան 10, սենյակ 1>> հասցեում:

7.2 Հայտերի բացման նիստում՝

1) նախագահը (նիստը նախագահողը) նիստը հայտարարում է բացված և հրապարակում է գնման առարկայի ընդհանուր (նախահաշվային) գինը՝ մեկ թվով արտահայտված: Հանձնաժողովի քարտուղարը տեղեկատվություն է հաղորդում գրանցամատյանում կատարված գրառումների մասին և հանձնաժողովի նախագահին է փոխանցում հայտերի գրանցամատյանը, դրա անբաժանելի մասը հանդիսացող մյուս փաստաթղթերը և գրանցված հայտերը:

2) սույն կետի 1-ին ենթակետում նշված փաստաթղթերը նախագահին փոխանցվելուց հետո հանձնաժողովը գնահատում է՝

ա. հայտեր պարունակող ծրարները կազմելու և ներկայացնելու համապատասխանությունը սահմանված կարգին և բացում համապատասխանող գնահատված հայտերը,

բ. բացված յուրաքանչյուր ծրարում պահանջվող (նախատեսված) փաստաթղթերի առկայությունը և դրանց կազմման համապատասխանությունը հրավերով սահմանված վավերապայմաններին:

3) հանձնաժողովի նախագահը հայտարարում է հայտեր ներկայացրած մասնակցների գնային առաջարկները՝ մեկ թվով արտահայտված հիմք ընդունելով տառերով գրվածը:

4) հանձնաժողովը մերժում է այն հայտերը, որոնցում բացակայում են հրավերի պահանջներին համապատասխան ներկայացված գնային առաջարկը:

5) հանձնաժողովը հրավերի պահանջներին կատարմամբ բավարարող գնահատված հայտեր ներկայացրած մասնակցներից որոշում և

հայ տարարուն է առաջին և հաջորդաբար տեղեր զբաղեցրած մասնակիցներին: Առաջարկված նվազագույն գներին հավասարություն դեպքում կամ եթե ոչ գնային պայմաններին բավարարող գնահատված հայտեր ներկայացրած բոլոր մասնակիցներին ներկայացրած գնային առաջարկները գերազանցում են այդ գնումը կատարելու համար նախատեսված ֆինանսական միջոցները

ա. առաջին և հաջորդաբար տեղեր զբաղեցրած մասնակիցներին որոշելու նպատակով հանձնաժողովին նիստում առաջարկված գներին նվազեցման նպատակով ոչ գնային պայմանները բավարարող գնահատված բոլոր մասնակիցների հետ վարվում են միաժամանակյա բանակցություններ, եթե նիստին ներկա են բոլոր մասնակիցները (համապատասխան լիազորություն ունեցող ներկայացուցիչները),

բ. հակառակ դեպքում հանձնաժողովին նիստը կատարվում է, և մեկ աշխատանքային օրվա ընթացքում գնահատող հանձնաժողովին քարտուղարը բավարարող գնահատված բոլոր մասնակիցներին էլեկտրոնային ձևով միաժամանակ ծանուցում է գներին նվազեցման շուրջ միաժամանակյա բանակցությունների վարման օրվա, ժամի և վայրի մասին,

գ. բանակցությունները վարվում են ոչ շուտ, քան ծանուցումն ուղարկվելու օրվան հաջորդող օրվանից հաշված երկրորդ աշխատանքային օրը,

դ. յուրաքանչյուր Մասնակցի՝ տվյալ պահին ներկայացրած գնային առաջարկը հրապարակվում է մյուս Մասնակիցներին համար, և մինչև բանակցությունների համար նախատեսված վերջնաժամկետի ավարտը Մասնակիցը կարող է վերանայել իր գնային առաջարկը,

ե. բանակցությունների համար սահմանված վերջնաժամկետը լրանալու պահին, ըստ Մասնակիցներին ներկայացրած գներին, որոնց գինը չի գերազանցում այդ գնումը կատարելու համար նախատեսված ֆինանսական միջոցների չափը, որոշվում և հայտարարվում են առաջին և հաջորդաբար տեղերը զբաղեցրած մասնակիցները,

զ. բանակցությունների համար սահմանված վերջնաժամկետը լրանալու պահին, եթե Մասնակիցներին ներկայացրած գները դեռևս գերազանցում են գնումը կատարելու համար նախատեսված ֆինանսական միջոցների չափը, գնման ընթացակարգը հայտարարվում է չկայացած, և պայմանագիր չի կնքվում:

7.2.1 Հայտերը բացվելուց հետո կազմվում է արձանագրություն: Արձանագրությունն ստորագրում են հանձնաժողովին նիստին ներկա անդամները:

Եթե հանձնաժողովին անդամը և (կամ) Մասնակիցը հայտերի բացման վերաբերյալ ցանկանում է արտահայտել հայտերի բացման նիստի արձանագրության մեջ չներառված կարծիք (հատուկ կարծիք), ապա դա ներկայացնում է գրավոր՝ նիստի ընթացքում, որը կցվում է սույն կետում նշված արձանագրությանը:

7.2.2 Հայտերը գնահատվում են սույն հրավերով սահմանված կարգով: Բավարար են գնահատվում հրավերով նախատեսված պայմաններին համապատասխանող հայտերը, հակառակ դեպքում հայտերը գնահատվում են անբավարար և մերժվում են:

7.2.3 Առաջին տեղը զբաղեցրած մասնակիցը որոշվում է՝ բավարարող գնահատված հայտեր ներկայացրած մասնակիցների թվից՝ նվազագույն գնային առաջարկ ներկայացրած Մասնակցին նախապատվություն տալու

սկզբունքով: Ընդ որում, հանձնաժողովի կողմից առաջին և հաջորդաբար տեղեր զբաղեցրած մասնակիցներին որոշելիս՝

ա. գնային առաջարկներին գնահատումը և համեմատումն իրականացվում է առանց սույն հրավերի 2-րդ մասի 4.2 կետում նշված հարկի գումարի հաշվարկման,

բ. գնման առարկաների գծով գնային առաջարկներին գնահատման և համեմատման ընթացքում Եվրասիական տնտեսական միությունն անդամ երկրներին արտադրության ապրանքներ առաջարկող մասնակիցներն ունեն մինչև 15 տոկոս գնային առավելություն⁶: Իսկ ընտրված մասնակից ճանաչվելու և պայմանագիր կնքվելու դեպքում ապրանքի յուրաքանչյուր խմբաքանակի մատակարարման ժամանակ Պատվիրատուին պետք է ներկայացվի նաև տվյալ խմբաքանակի ապրանքների ծագման երկրի սերտիֆիկատը:

7.2.4 Եթե հայտում անհամապատասխանություն է տեղ գտել տառերով և թվերով գրված գումարների միջև, ապա հիմք է ընդունվում տառերով գրված գումարը:

7.2.5 Հանձնաժողովի, Պատվիրատուի և Մասնակիցների միջև բանակցություններն արգելվում են, բացառությամբ՝

1) երբ ընթացակարգին մասնակցել է մեկ Մասնակից, որի ներկայացրած հայտը համապատասխանում է հրավերի պահանջներին կամ հայտերի գնահատման արդյունքում հրավերի պահանջներին համապատասխան է գնահատվել միայն մեկ Մասնակցի հայտ: Սույն կետի համաձայն վարվող բանակցությունները կարող են հանգեցնել միայն առաջարկված գնի նվազեցմանը և (կամ) վճարման պայմանների փոփոխությունը:

2) Օրենքով նախատեսված այլ դեպքերի:

7.2.6 Էլեկտրոնային եղանակով ծանուցումներն իրականացվում են տեղեկությունները էլեկտրոնային փոստին ուղարկվելու միջոցով: Տեղեկություններին (փաստաթղթերին) էլեկտրոնային եղանակով փոխանակման դեպքում դրանք ուղարկողը տեղեկությունները (փաստաթղթերը) հաստատում է էլեկտրոնային ստորագրությամբ կամ տեղեկությունները (փաստաթղթերը) ուղարկում է հաստատված բնօրինակ փաստաթղթից արտատպված (սկանավորված) տարբերակով:

7.2.7 Պահանջի դեպքում Մասնակցի հայտի, ներառյալ գնային առաջարկի, ինչպես նաև առաջին տեղը զբաղեցրած մասնակցի կողմից ներկայացված ապրանքի անվանումը և տեխնիկական բնութագրերը պարունակող փաստաթղթի պատճենները հանձնաժողովի քարտուղարն անհապաղ տրամադրում է նման պահանջներ կայացրած Մասնակցին:

7.3 Եթե հայտերի բացման նիստի ընթացքում իրականացված գնահատման արդյունքում հայտերում արձանագրվում են անհամապատասխանություններ՝ հրավերի պահանջներին նկատմամբ, բացառությամբ այն դեպքերի, երբ հայտում բացակայում է գնային առաջարկը, կամ գնային առաջարկը ներկայացված է հրավերի պահանջներին անհամապատասխան, ապա հանձնաժողովը մեկ աշխատանքային օրով կասեցնում է նիստը, իսկ հանձնաժողովի քարտուղարը նույն օրը դրա մասին էլեկտրոնային եղանակով տեղեկացնում է Մասնակցին՝ առաջարկելով մինչև կասեցման ժամկետի ավարտը 2 տվել անհամապատասխանությունը:

7.4 Եթե սույն հրավերի 7.3 կետով սահմանված ժամկետում Մասնակցը 2 տվում է արձանագրված անհամապատասխանությունը, ապա

⁶ Եթե գնման հայտով ներկայացված տվյալ գնման առարկայի պահանջվող քանակի և առավելագույն գնի արտադրողը գերազանցում է գնումներին բազային միավորի 70-ապառիկը, ապա սույն ենթակետը հրավերից հանվում է: Ընդ որում, գնման ընթացակարգը չափաբաժիններով կազմակերպվելու դեպքում գնման առարկայի պահանջվող քանակի և առավելագույն գնի արտադրողը հաշվարկվում է ըստ չափաբաժինների:

վերջինս հայտը գնահատվում է բավարար: Հակառակ դեպքում հայտը գնահատվում է անբավարար և մերժվում:

7.5 Հայտերի բացման նիստի ավարտին հաջորդող աշխատանքային օրը հանձնաժողովի քարտուղարն էլեկտրոնային եղանակով՝

1) Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարության հարցում է ներկայացնում առաջին և երկրորդ տեղ զբաղեցրած մասնակցների՝ Հայաստանի Հանրապետության պետական բյուջեի նկատմամբ հայտը ներկայացնելու օրվա դրությամբ ժամկետանց հարկային պարտավորություններին, ինչպես նաև սույն հրավերի 2.3 կետի <<Ֆինանսական միջոցներ>> ռակավորման չափանիշին վերաբերող պարբերությամբ նախատեսված ռակավորման պահանջի առկայության վերաբերյալ՝ ներկայացնելով հարկ վճարողի հաշվառման համարը, ընդ որում նշված հարցումն ուղարկվում է Ashkhen_Papoyan@taxservice.am էլեկտրոնային փոստի հասցեին սույն հրավերի 7-րդ հավելվածով նախատեսված ձևին համապատասխան՝ էլեկտրոնային նամակի պատճենները միաժամանակ ուղարկելով Lusine_Ghahramanyan@taxservice.am և procurement@minfin.am էլեկտրոնային փոստի հասցեներին⁷:

2) ծանուցում է առաջին տեղը զբաղեցրած մասնակցին՝ առաջարկելով երեք աշխատանքային օրվա ընթացքում ներկայացնել ռակավորման չափանիշները հիմնավորող՝ սույն հրավերի 2-րդ մասի հայտատրաստելու հրահանգի 3-րդ բաժնով նախատեսված փաստաթղթերը, ինչպես նաև հայտով առաջարկված ապրանքի (ապրանքների) անվանումը և տեխնիկական բնութագրերը: Սույն մասով սահմանված ժամկետում փաստաթղթերը չներկայացվելու դեպքում հանձնաժողովը մերժում է առաջին տեղը զբաղեցրած մասնակցի հայտը և փաստաթղթեր ներկայացնելու պահանջ է ներկայացնում հաջորդող տեղը զբաղեցրած մասնակցին⁸:

3) ծանուցում է առաջին տեղը զբաղեցրած մասնակցին առաջարկելով սույն կետի 2-րդ ենթակետով նախատեսված ժամկետում ներկայացնել նաև լրացուցիչ հիմնավորումներ, եթե առաջին տեղը զբաղեցրած մասնակցը ներկայացրել է չհիմնավորված ցածր գնային առաջարկ: Սույն մասով սահմանված ժամկետում փաստաթղթային հիմնավորումները չներկայացվելու կամ ներկայացված հիմնավորումները գնահատող հանձնաժողովի կողմից ոչ բավարար համարվելու դեպքում հանձնաժողովը մերժում է առաջին տեղը զբաղեցրած մասնակցի հայտը և փաստաթղթեր ներկայացնելու պահանջ է ներկայացնում հաջորդող տեղը զբաղեցրած մասնակցին: Ընդ որում, գնային առաջարկը համարվում է չհիմնավորված ցածր, եթե այն ցածր է տվյալ գնման հայտով նախատեսված առավելագույն գնի 75 տոկոսից:

7.5.1 Պայմանագիրը կարող է իրականացվել գործակալության պայմանագրի կնքելու միջոցով: Գործակալության պայմանագրի կողմ

⁷ Եթե գնման առարկայի նմանատիպ խմբի նախահաշվային գինը գնումներին պլանի լրացման կարգի համաձայն չի գերազանցում գնումներին բազային միավորին հնգապատիկը, կամ եթե գնման առարկան անշարժ գույք է, ապա ՀՀ ֆինանսների նախարարության կողմից տրամադրված եզրակացությունը <<Ֆինանսական միջոցներ>> ռակավորման չափանիշի մասով չի գնահատվում:

⁸ Եթե գնման առարկայի նմանատիպ խմբի նախահաշվային գինը գնումներին պլանի լրացման կարգի համաձայն չի գերազանցում գնումներին բազային միավորին հնգապատիկը, կամ եթե գնման առարկան անշարժ գույք է, ապա սույն ենթակետի տրամադրվում է՝ նկատի ունենալով, որ առաջին տեղը զբաղեցնող մասնակցի կողմից ռակավորման չափանիշները հիմնավորող փաստաթղթեր չեն ներկայացվում:

չի կարող հանդիսանալ սույն ընթացակարգում հաղթող ճանաչված, սակայն պայմանագրի կնքելուց հրաժարված Մասնակիցը:

7.5.2 Մասնակիցները կարող են սույն ընթացակարգին մասնակցել համատեղ գործունեության կարգով (կոնսորցիումով): Նման դեպքում՝

1) հայտի գնահատման ժամանակ հաշվի է առնվում, որ համատեղ գործունեության պայմանագրի յուրաքանչյուր անդամի որակավորումը պետք է համապատասխանի սույն կետի 1-ին ենթակետով նախատեսված պայմանագրով տվյալ անդամի ստանձնած՝ սույն հրավերով սահմանված որակավորման պահանջներին:

2) Մասնակիցները կրում են համատեղ և համապարտ պատասխանատվություն:

3) կոնսորցիումի անդամի կոնսորցիումից դուրս գալու դեպքում կոնսորցիումի հետ Պատվիրատուի կնքած պայմանագրերը միակողմանիորեն լուծվում է և կոնսորցիումի անդամներին կատարվող կիրառվում են պայմանագրով նախատեսված պատասխանատվության միջոցները:

7.5.3 Քարտուղարը հայտերի բացման նիստի ավարտին հաջորդող աշխատանքային օրը հայտերի բացման նիստի արձանագրությունը հրապարակում է www.gnumner.am հասցեով ինտերնետային կայքում:

7.6 Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարությունը սույն հրավերի 7.5 կետի 1-ին ենթակետով նախատեսված հարցումն ստանալու օրվան հաջորդող երեք աշխատանքային օրվա ընթացքում էլեկտրոնային եղանակով Պատվիրատուին տրամադրում է հարցման մասին սույն հրավերի 8-րդ հավելվածով նախատեսված ձևին համապատասխան եզրակացություն: Սույն կետով սահմանված ժամկետում Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարությունից եզրակացության չստացման դեպքում Մասնակցի ներկայացրած հայտարարությունը համարվում է իրականությանը համապատասխանող: Եթե տրամադրված եզրակացության արդյունքում Մասնակցի ներկայացրած հայտարարությունը՝ Հայաստանի Հանրապետության պետական բյուջեի նկատմամբ ժամկետանց հարկային պարտավորություններ չունենալու մասով, որակվում է իրականությանը չհամապատասխանող, ապա՝

1) հայտերի գնահատման արդյունքների հրապարակման նիստում հանձնաժողովի որոշմամբ տվյալ Մասնակցի հայտը մերժվում է, և

2) այդ Մասնակցի տվյալ ներքև գնման գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու գործընթաց նախաձեռնելու նպատակով ի հայտ եկած հանգամանքների մասին տեղեկությունները Պատվիրատուի կողմից ուղարկվում են Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարություն՝ դրանց ի հայտ գալու օրվան հաջորդող երեք աշխատանքային օրվա ընթացքում:

Սույն կետում նշված՝ Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարության կողմից տրամադրված եզրակացությունը համարվում է հարկային գաղտնիք, բացառությամբ Մասնակցի կողմից կամ նրա համաձայնության հրապարակված տեղեկությունների:

7.7 Սույն հրավերի 7.5-րդ կետի 2-րդ ենթակետով նախատեսված՝ Մասնակցի կողմից ներկայացվող փաստաթղթերն ուղարկելու ժամկետի ավարտին հաջորդող աշխատանքային օրը քարտուղարն էլեկտրոնային եղանակով հանձնաժողովի անդամներին միաժամանակ տրամադրում է առաջին տեղը զբաղեցրած Մասնակցի կողմից ներկայացված փաստաթղթերի պատճենները, գնահատման թերթիկների երկու ակն

օրինակ և Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարությունից ստացված եզրակացությունը: Սույն կետում նշված փաստաթղթերի գնահատման արդյունքների հաստատման նիստը հրավիրվում է ոչ ոչ, քան փաստաթղթերը հանձնաժողովի անդամների նախաձեռնությամբ կամ հաջորդող երրորդ աշխատանքային օրը: Ընդ որում հանձնաժողովը գնահատում է նաև ներկայացված տեխնիկական բնութագրերի համապատասխանությունը հրավերի պահանջներին, իսկ անհամապատասխանությունն արձանագրելու դեպքում հանձնաժողովի նիստի արձանագրության մեջ մանրամասն նկարագրվում են հայտնաբերված անհամապատասխանությունները:⁹

7.8 Մասնակիցները և նրանց ներկայացուցիչները կարող են ներկայ գտնվել հանձնաժողովի նիստերին: Նրանք կարող են պահանջել հանձնաժողովի նիստերի արձանագրությունների պատճենները, որոնք տրամադրվում են մեկ օրացուցային օրվա ընթացքում:

8. ՀԱՅՏԵՐԻ ԳՆԱՀԱՏՈՒՄԸ, ՀԱՄԵՄԱՏՈՒՄԸ ԵՎ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԻ ԱՍՓՈՓՈՒՄԸ

8.1 Սույն հրավերի 7.7 կետով նախատեսված փաստաթղթերը գնահատելու նպատակով հրավիրվող նիստում՝

8.1.1 հանձնաժողովը գնահատում է սույն հրավերի 7.7 կետի համաձայն ներկայացված փաստաթղթերի (տեղեկություններին) համապատասխանությունը հրավերով սահմանված պահանջներին:

8.1.2 Առաջին տեղը զբաղեցրած մասնակցի կողմից փաստաթղթերն ամբողջական չներկայացվելու, ինչպես նաև ներկայացրած որակավորման չափանիշները հիմնավորող սույն հրավերով նախատեսված փաստաթղթերի և սույն հրավերի 4.3 կետի <<q>> ենթակետով նախատեսված փաստաթղթի գնահատման արդյունքում հրավերի պահանջներին կատարման համապատասխանություններ արձանագրվելու դեպքում հանձնաժողովի քարտուղարը սույն օրն էլ եկտրոնային եղանակով ծանուցում է առաջին տեղը զբաղեցրած մասնակցին առաջարկելով մեկ աշխատանքային օրվա ընթացքում շտկել անհամապատասխանությունը¹⁰:

8.1.3 Առաջին տեղը զբաղեցրած մասնակցի կողմից արձանագրված անհամապատասխանությունը սահմանված ժամկետում՝

1) շտկելու դեպքում հայտը գնահատվում է բավարարելի առաջին տեղը զբաղեցրած մասնակցից հայտարարվում է ընտրված մասնակցից:

2) չշտկելու դեպքում հանձնաժողովի որոշմամբ հայտը մերժվում է և փաստաթղթեր ներկայացնելու պահանջ է ներկայացվում հաջորդաբար տեղ զբաղեցրած մասնակցին:

8.1.4 Եթե Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարության եզրակացության համաձայն առաջին տեղն զբաղեցրած մասնակցից Հայաստանի Հանրապետության պետական բյուջեի նկատմամբ հայտը ներկայացնելու օրվա դրությամբ չունի ժամկետանց հարկային

⁹ Սույն կետը հրավերից հանվում է, եթե գնման առարկայի նմանատիպ խմբի նախահաշվային գինը գնումների պլանի լրացման կարգի համաձայն չի գերազանցում գնումների բազային միավորի հնգապատիկը, կամ եթե գնման առարկա է հանդիսանում անշարժ գույքը:

¹⁰ Եթե գնման առարկայի նմանատիպ խմբի նախահաշվային գինը գնումների պլանի լրացման կարգի համաձայն չի գերազանցում գնումների բազային միավորի հնգապատիկը, կամ եթե գնման առարկան անշարժ գույք է, ապա սույն կետը խմբագրվում է նկատի ունենալով, որ առաջին տեղը զբաղեցնող մասնակցի կողմից որակավորման չափանիշները հիմնավորող փաստաթղթեր չեն ներկայացվում:

պարտավորություններ, ապա առաջին տեղն զբաղեցրած մասնակիցը հայտարարվում է ընտրված մասնակից¹¹:

8.1.5 Ընտրված մասնակցի կողմից պայմանագիրը չկնքելու (հրաժարվելու) կամ պայմանագիր կնքելու իրավունքից զրկվելու դեպքում հանձնաժողովը ընտրված մասնակցի որոշման նպատակով կիրառում են սույն հրավերով նախատեսված պայմանները:

Հայտերի գնահատումը, համեմատումը և հաղթողների որոշումը իրականացվելու է ըստ առանձին չափաբաժինների:

8.2. Հայտը գնահատվում է բավարար, եթե սույն հրավերի 7.7 կետի համաձայն ներկայացված տվյալները բավարարում են հրավերով սահմանված պահանջները: Մասնակցի որակավորումը գնահատվում է բավարար, եթե վերջինս ապահովում է սույն հրավերի ընթացակարգի հայտը պատրաստելու հրահանգի 3-րդ բաժնով նախատեսված պահանջները: Նման դեպքում մասնակիցը հայտարարվում է ընտրված:

8.4 Հայտերի գնահատման արդյունքներով կազմվում է հայտերի գնահատման նիստի արձանագրություն, որը կցվում է գնման ընթացակարգի արձանագրությանը: Արձանագրությունն ստորագրում են հանձնաժողովի նիստին ներկայանող անդամները:

8.5 Մասնակիցը, իրեն ներկայացված պահանջներին համապատասխանության հիմնավորման նպատակով կարող է ներկայացնել լրացուցիչ այլ փաստաթղթեր, տեղեկություններ և նյութեր:

Գնահատող հանձնաժողովը կարող է ստուգել Մասնակցի ներկայացրած տվյալների իսկությունը՝ օգտագործելով պաշտոնական աղբյուրներին պատկանող տվյալներ կամ դրա մասին ստանալով իրավասու մարմինների գրավոր եզրակացությունը: Նման հարցում ուղարկվելու դեպքում համապատասխան պետական և տեղական ինքնակառավարման մարմինները հարցումն ստանալու օրվան հաջորդող երկու աշխատանքային օրվա ընթացքում տրամադրում են գրավոր եզրակացություն: Եթե Մասնակցի ներկայացրած տվյալների իսկության ստուգման արդյունքում տվյալները որակվում են իրականությանը չհամապատասխանող, ապա՝

1) տվյալ Մասնակցի հայտը մերժվում է:

2) Մասնակցի տվյալները գնման գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակցների ցուցակում ներառելու գործընթաց նախաձեռնելու նպատակով ի հայտ եկած հանգամանքների մասին տեղեկությունները Պատվիրատուի կողմից ուղարկվում են Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարություն՝ դրանց ի հայտ գալու օրվան հաջորդող երեք աշխատանքային օրվա ընթացքում:

8.6. Սույն հրավերի 8.5 կետի կիրառման նպատակով հրավիրվում է հանձնաժողովի արտահերթ նիստ:

8.7. Պայմանագիր կնքվելու, իսկ սույն ընթացակարգի արդյունքում պայմանագիր չկնքվելու դեպքում այդ հանգամանքը հայտնի դառնալու օրվան հաջորդող օրացուցային օրը հրավիրվում է արդյունքների ամփոփման նիստ, որի ընթացքում հայտարարվում են ընթացակարգի արդյունքները:

¹¹ Եթե գնման առարկայի նմանատիպ խմբի նախահաշվային գինը գնումների պլանի լրացման կարգի համաձայն գերազանցում է գնումների բազային միավորի հնգապատիկը, ինչպես նաև եթե գնման առարկա չի հանդիսանում անշարժ գույքը, ապա սույն բաժնի 8.1.4 կետը հրավերից հանվում է:

8.8 Մինչև պայմանագրի կնքելը, Պատվիրատուն հրապարակում է հայտարարություն պայմանագրի կնքելու որոշման մասին: Այդ մասին կարող է հայտարարվել՝

1) արդյունքների ամփոփման նիստում՝ հանրային իրազեկման միջոցով, որին հրավիրվել են գնումների գործընթացի բոլոր մասնակիցները.

2) նման հայտարարությունը էլեկտրոնային ձևով կամ ֆաքսով կամ փոստով՝ պատվիրված նամակով, կարող է ուղարկվել գնումների գործընթացի բոլոր մասնակիցներին.

3) նման հայտարարությունը տեղադրվում է լիազորված մարմնի, իսկ հնարավորության դեպքում՝ նաև Պատվիրատուի ինտերնետային կայքում:

8.9 Անգործության ժամկետը պայմանագրի կնքելու մասին որոշման հայտարարության հրապարակման օրվան հաջորդող օրվա և Պատվիրատուի կողմից պայմանագիրը կնքելու իրավասության առաջացման օրվա միջև ընկած ժամանակահատվածն է:

Անգործության ժամկետը սույն ընթացակարգի դեպքում << 5 >>

օրացուցային օր է: Անգործության ժամկետը կիրառելի չէ, եթե հայտ է ներկայացրել միայն մեկ Մասնակից, որի հետ կնքվում է պայմանագիր:

Պատվիրատուն պայմանագիրը կնքում է, եթե սույն կետով նախատեսված անգործության ժամկետում որևէ մասնակից գնումների բողոքարկման խորհրդում չի բողոքարկում պայմանագրի կնքելու մասին որոշումը: Մինչև անգործության ժամկետը լրանալը կնքած պայմանագրին առնչվող է:

8.10 Ամփոփման նիստի վերաբերյալ կազմվում է արձանագրություն, որը կցվում է գնման ընթացակարգի արձանագրությանը: Արձանագրությունն ստորագրում են հանձնաժողովի նիստին ներկա անդամները:

8.11 Եթե հանձնաժողովի անդամը և (կամ) Մասնակիցը ամփոփման նիստի վերաբերյալ ցանկանում է արտահայտել ամփոփման նիստի արձանագրության մեջ չներառված կարծիք (հատուկ կարծիք), ապա դա ներկայացնում է գրավոր՝ նիստի ընթացքում, որը կցվում է սույն մասի 8.10 կետում նշված արձանագրությանը:

9. ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԿՆՔՈՒՄԸ

9.1 Պայմանագրի կնքվում է հանձնաժողովի որոշման հիման վրա՝ Պատվիրատուի կողմից: Պայմանագիրը կնքվում է գրավոր՝ մեկ փաստաթուղթ կազմելու միջոցով:

9.2 Ընտրված մասնակիցը հայտարարվելուն հաջորդող երկու օրացուցային օրվա ընթացքում Պատվիրատուն ծանուցում է ընտրված մասնակցին՝ ներկայացնելով պայմանագրի կնքելու առաջարկը և պայմանագրի նախագիծը և պայմանագրի ապահովում ներկայացնելու ապահանջը:

Ընտրված մասնակցին պայմանագրի կնքելու առաջարկը և կնքվելիք պայմանագրի նախագիծը հանձնաժողովի քարտուղարը տրամադրում է էլեկտրոնային եղանակով: Ընդ որում պայմանագրի նախագիծում ներառվում են ընտրված մասնակցի կողմից հայտով ներկայացված ապրանքի անվանումը և տեխնիկական բնութագրերը:

9.3 Ընտրված մասնակցի կողմից հաստատված պայմանագրի նախագիծը Պատվիրատուին ներկայացվում է գրավոր և դրա ներկայացման գրությունը հաշվառվում է Պատվիրատուի փաստաթղթաշրջանառության համակարգում: Ընդ որում, Պատվիրատուի ղեկավարի կողմից

պայ ման ագրի նախագիծը հաստատվում է այդ իրավասությունն առաջացմանը հաջորդող երկու աշխատանքային օրվա ընթացքում:

9.4 Եթե ընտրված մասնակցը պայմանագրի կնքելու մասին ծանուցումը և պայմանագրի նախագիծը ստանալուց հետո սույն հրավերի 8.9 կետով նախատեսված անգործության ժամկետի ավարտից 5 օրացուցային օրվա ընթացքում չի ստորագրում պայմանագիրը և սույն հրավերի 10.1 կետով նախատեսված ժամկետում Պատվիրատուին չի ներկայացնում պայմանագրի, իսկ պայմանագրով կանխավճար նախատեսվելու դեպքում նաև կանխավճարի ապահովումը¹², ապա նա գրկվում է պայմանագիրը ստորագրելու իրավունքից:

Հայտի ապահովումը՝ տուժանքը, վճարում է Մասնակցը, եթե նա հայտարարվել է ընտրված մասնակից, սակայն հրաժարվում կամ գրկվում է պայմանագրի կնքելու իրավունքից:

9.5 Մինչև սույն հրավերի 9.4 կետով նախատեսված ժամկետի ավարտը, կողմերի համաձայնությունամբ, կարող են պայմանագրի նախագծում կատարվել փոփոխություններ, սակայն դրանք չեն կարող հանգեցնել գնման առարկայի բնութագրերի փոփոխմանը, ներառյալ ընտրված մասնակցի առաջարկած գնի ավելացմանը:

10. ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԱՊԱՀ ՌՎՈՒՄԸ

10.1 Պայմանագրի ապահովում ներկայացնելու պահանջի հիման վրա, այն ստանալու օրվանից հինգ օրացուցային օրվա ընթացքում, ընտրված մասնակցը պարտավոր է ներկայացնել պայմանագրի ապահովում: Ընտրված մասնակցի հետ պայմանագրի կնքվում է, եթե վերջինս ներկայացնում է պայմանագրի ապահովում:

10.2 Պայմանագրի կատարման ապահովման չափը կազմում է պայմանագրի գնի տասը տոկոսը: Պայմանագրի ապահովումը ներկայացվում է ընտրված մասնակցի կողմից միակողմանի հաստատված հայտարարության՝ տուժանքի ձևով (Հավելված 10):

10.3 Պայմանագրով Պատվիրատուի կողմից կանխավճար հատկացվելու պայման նախատեսվելու դեպքում ընտրված մասնակցը նախապես Պատվիրատուին է ներկայացնում կանխավճարի ապահովում՝ կանխավճարի չափով, երաշխիքի ձևով (օրինակելի ձևը ըստ Հավելված 11-ի), ընդ որում՝ պետության համար պարտավորություններ առաջացնող գնումների գործարքների դեպքում կանխավճարի ապահովումը հիմնավորապես փաստաթղթում որպես բենեֆիցիար պետք է նշվի Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարությանը: Կանխավճարի մարման կարգը սահմանվում է պայմանագրի նախագծով:

10.4 Եթե այլ բան նախատեսված չէ պայմանագրով, ապա պայմանագրի և (կամ) կանխավճարի ապահովումը վերադարձվում է այն ներկայացնողին պայմանագրի կատարման ավարտից հետո ոչ ոչ, քան հինգ օրացուցային օրվա ընթացքում:

11. ԸՆԹԱՑ ԱԿԱՐԳԸ ՉԿԱՅԱՑԱԾ ՀԱՅՏԱՐԱՐԵԼԸ

11.1 Օրենքի 35-րդ հոդվածի համաձայն՝ հանձնաժողովը սույն ընթացակարգը չկայացած է հայտարարում, եթե՝

1) հայտերից ոչ մեկը չի համապատասխանում հրավերի պայմաններին.

2) դադարում է գոյություն ունենալ գնման պահանջը¹³.

¹² Եթե պայմանագրով նախատեսվում է կանխավճար

¹³ Ընդ որում՝ պետության կարիքների համար կազմակերպված գնման ընթացակարգը կարող է ամբողջությամբ կամ մասնակի չկայացած հայտարարվել ՀՀ կառավարության որոշման հիման վրա:

3) ոչ մի հայ տղի ներկայացվել .

4) պայմանագիր չի կնքվում:

11.2. Ընթացակարգը չկայացած հայ տարարվելուց հետո արգելվում է բացել չբացված հայ տերը, որոնք վերադարձվում են մասնակիցներին:

11.3 Գնման ընթացակարգը չկայացած հայ տարարվելուց հետո հինգ օրացուցային օրվա ընթացքում, Պատվիրատուն www.gnumner.am կայքում հրապարակում է հայ տարարություն, որում նշվում է գնման ընթացակարգը չկայացած հայ տարարվելու հիմնավորումը:

12. ԳՆԱՄԱՆ ԳՈՐԾԸՆԹՅՑԻ ՀԵՏ ԿԱՊՎԱԾ ԳՈՐԾՈՂՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ԵՎ (ԿԱՍ) ԸՆԴՈՒՆՎԱԾ ՈՐՈՇՈՒՄՆԵՐԸ ԲՈՂՈՔԱՐԿԵԼՈՒ ՄԱՍՆԱԿՑԻ ԻՐԱՎՈՒՆՔԸ ԵՎ ԿԱՐԳԸ

12.1 Յուրաքանչյուր անձ իրավունք ունի բողոքարկելու Պատվիրատուի, գնահատող հանձնաժողովի և գնումների բողոքարկման խորհրդի գործողությունները (անգործություններ) և որոշումները:

12.1.1 Յուրաքանչյուր անձ, ով գտնում է, որ Պատվիրատուի կամ գնահատող հանձնաժողովի գործողությունների հետևանքով խախտվել են կամ կարող են խախտվել գնումների մասին Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված պահանջները, իրավունք ունի ահագանգելու գնումների աջակցման կենտրոն ՊՈԱԿ-ի (այսուհետև՝ նաև կենտրոն) թեժ գծին:

12.1.2 Գնումների մասին Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված պահանջների խախտման վերաբերյալ կենտրոնի թեժ գծին ահագանգ ատանալու դեպքում՝

1) կենտրոնն ստացված ահագանգի վերաբերյալ կազմում է արձանագրություն, եթե առկա են հետևյալ տեղեկությունները՝

ա. Պատվիրատուի անվանումը,

բ. գնման ընթացակարգի ծածկագիրը կամ առարկան,

գ. գնումների մասին Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված պահանջների խախտման առարկան,

դ. ահագանգողի անունը (անվանումը), եթե այն հայտնի է.

2) կենտրոնի պետի հանձնարարականով կենտրոնի պաշտոնատար անձը մեկ աշխատանքային օրվա ընթացքում հեռախոսակապ է հաստատում տվյալ ընթացակարգի գնումների համակարգողի, իսկ անհնարինության դեպքում՝ Պատվիրատուի ղեկավարի կամ աշխատակազմի ղեկավարի հետևյալ վերջինիս տեղեկացում է ստացված ահագանգի վերաբերյալ, ինչպես նաև ներկայացնում է Պատվիրատուի կողմից կենտրոնին ներկայացվելիք անհրաժեշտ փաստաթղթերի ցանկը: Կենտրոնն ստացված ահագանգի, ինչպես նաև ներկայացվելիք փաստաթղթերի ցանկի վերաբերյալ սույն ենթակետով նախատեսված ժամկետում ծանուցում է նաև էլեկտրոնային փոստով՝ Պատվիրատուի պաշտոնական էլեկտրոնային հասցեի առկայության դեպքում:

3) Պատվիրատուն մեկ աշխատանքային օրվա ընթացքում էլեկտրոնային եղանակով սկսնավորված տարբերակով կենտրոնին է տրամադրում պահանջված փաստաթղթերի պատճենները, ինչպես նաև ստացված ահագանգի վերաբերյալ Պատվիրատուի գրավոր կարծիքը:

4) Եթե Պատվիրատուի կողմից ընդունվում է կատարված խախտումը և վերջինս համաձայնում անմիջապես վերացնել այն, ապա արձանագրված

